րի վերայի քանդակներին, որ յաճախ պիտի տեսնենք յետոյ եւս։ Իսկ գ քանդակը պարզ գերեզմանական կոթողի վերին մասն է, խաչարձան, կոթը հաստատուած շրջանակի մէջ. վարդեակի վերայ շրջանակի պարզը հասկաձեւ, իսկ վերեւի մասը վերջացած հաւասարակող խաչով՝ պսակի մէջ առնուած. վերեւից եւ հորիզոնական թեւերից մի մի ողկոյզ կախուած՝ երեսները շեղակի գծերով կտրատուած, ինչպէս առաջ էլ տեսանք։ Խաչարձանի այս ձեւը, որ յետոյ նման յուշարձանների համար ընդհանուր է դառնում, Հայաստանի մէջ շատ տարածուած եւ բարձր զարգացման ու պէտպիսութեան հասած մի երեւոյթ է յետագայ դարերում, որպէս հետեւանք Հայ եկեղեցու դաւանաբանական որոշ ուղղութեան, եւ հակառակ պատկերապաշտութեան՝ խաչի պաշտամանն տուած արտաքոյ կարգի նշանակութեան։*

Բայց արտաքոյ կարգի հետաքրքրական են եւ բնորոշ արուեստի տեսակէտով է. (Պատկ. 58, 59) բ. բ. ժ. բեկորները իրենց ձեւերով եւ քանդակներով, որոնք միջադարեան-սասանեան արուեստի հնագոյն մնացորդներ են մեզանում, հելլենական ընչով եւ չեն կրկնուում հայ ճարտարապետութեան մէջ եւ յետագայ շրջանների գերեզմանական կոթողների վերայ։ Առաջինը, որ ակնյայտնի կերպով խոյակ է, չէնքի մաս (Պատկ. 58), երկու երեսի պատկերն ունինք միայն, մէկը պալմիետների մէջ շուշանաձեւով, միւսը նոյն ականթների կամ պալմիետների մէջ հաւասարակող խաչ, պորտում բամաշկայ ծաղիկը, սասանեան եւ մեր այս շրջանի արուեստի մէջ յաճախ կրկնուած, ինչպէս եւ վերեւի գարնէզի հասկաձեւ զարդը, համեմատելի Կայիրէի թանգարանի 100. 7347 խոյակի հետ, շուշանաձեւի եւ ականթի ձեւի եւ քանդակման կողմից։ Շուշանաձեւը եւ կոթաւոր խաչը քիչ տարբեր ձեւակերպութեամբ նաեւ աջից բ. խոյակի (Պատկ.

գ. բ. դ.

Պատկ. 57

58) վերայ։ Շուշանաձեւը իւր տերեւներով նաեւ Դարաջալարի կոթողի վերայ, Արագածի հարաւային փէշերին (Պատկ. 60)։ Իններորդի տեսանելի երեսները աւետման խմբաքանդակն է, տարաբաղդաբար շատ եղծուած վիճակում։ Տասներորդ բեկորը կոթողի պատուանդան է, հաւանօրէն, որի բունը կլոր էր, վերեւի փոքրիկ մնացորդից դատելով։ Իսկ ձեւը երկու քառանկիւնիներ իրար վերայ եւ նրանց զարդերը, պորտաւոր վարդեակը, հակադիր եռանկիւնիների շրջանակը ալիքաձեւ զարդերը, եւ ուղղահայեաց գծազարդերը, նոյն հոսանքն են մատնանշում։ Այս խոյակները իրենց ձեւով յիշեցնում են Բրդաձորինը, բիւզանդական

*Տես մեր «Հաւուց Թառի Ամենափրկիչը». Երուս. 1937. 41, 51 եւ շար.։